



2014թ. հուլիսի 17-ին Ալավերդի քաղաքում կայացավ « Eco-Art» համայնքային արվեստի միջոցառումը, որը կազմակերպել էր «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն:

Միջոցառման ընթացքը ողողված էր Վանաձորի ռոք և այլ խմբերի կատարումներով, ինչպես նաև հրաշալի ելույթ ունեցան Մեծ Այրուճի պարի խմբակի սաները, որոնց գեղեցիկ կատարումները հիացրեցին հանդիսատեսին, դա պարի խմբակի սաների առաջին ելույթն էր բեմահարթակից, ըստ Մեծ Այրուճի պարի և նկարչական խմբակների գործունեությունը ֆինանսավորող «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի տնօրեն Օլեգ Դուլգարյանի, խմբակները գործում են 2014թ. մայիս ամսից և այդ ժամանակահատվածում խմբակների սաները բավականին հաջողությունների են հասել, Օլեգ Դուլգարյանը նաև հավելեց, որ առաջիկայում Այրուճի պարի և նկարչական խմբակների սաները կներգրավվեն նաև այլ միջոցառումներին:

Մեծ Այրուճի պարի և նկարչական խմբակները գործում են, «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն»ՀԿ-ի կողմից իրականացվող «Արարման Հարթակ» ծրագրի շրջանակներում:

«Արարման Հարթակ» ծրագիրը իրականացվում է «Հավասար հնարավորություններ ազգային փոքրամասնությունների և խոցելի խմբերի մշակութային իրավունքների իրագործման համար, հարստություն բազմազանության միջոցով» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ԳՈՒՐՏԻ կողմից՝ ԵՄ աջակցությամբ: